



USAID
 ამერიკელი ხალხისთვის



unag
 საერთაშორისო განვითარების აგენტი

USAID UNITY THROUGH DIVERSITY PROGRAM
 USAID-ის კომზადმა ერთიანობა მრავალფეროვნებაში

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԿՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ

Տեղեկատվական քարտ



ԻՆՏԵԳՐԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Վրաստանի ՄԱԿ-ի առցիացիան (UNA-Georgia), ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից աջակցված «Միասնություն բազմազանության մեջ» ծրագրի շրջանակներում հայտարարում է քաղաքացիական և տնտեսական ինտեգրման դրամաշնորհային ծրագիր:

Դրամաշնորհային ծրագրի նպատակն է Էթնիկ և կրոնական փոքրամասնություններին, ազգային և տեղական մակարդակով, ավելի լավ ներգրավել հասարակական կյանքում, երկրում խթանել հասարակական միասնությունը և հզորացնել փոխշահավետ սոցիալական, քաղաքացիական և տնտեսական կապերը:

Դրամաշնորհային մրցույթը կազմված է երկու ուղղությունից.

1. Քաղաքացիական ինտեգրման դրամաշնորհներ
2. Տնտեսական ինտեգրման դրամաշնորհներ

Երկրորդ ուղղության շրջանակներում դրամաշնորհային ծրագրի նպատակն է աջակցել Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին ձեռնարկատիրության և բիզնեսի զարգացման գործում, ավելի հասանելի դարձնել հանրային ֆինանսները և ծառայությունը Էթնիկ և կրոնական փոքրամասնություններով բնակեցված շրջաններում և սրանով բարելավել սոցիալ-տնտեսական միջավայրը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՆ ԾՐԱՍԿԱԿՆԵՐՈՒՄ.

- Էթնիկ և կրոնական փոքրամասնություններով բնակեցված շրջաններում ֆինանսական և տեխնիկական օգնություն միկրո, մանր և միջին ձեռնարկատերերի համար;
- Տնտեսական արժեք ստեղծելու ցիկլում աջակցել նոր կապերի ստեղծմանը և բարելավել ներքին շուկայի տնտեսական ինտեգրման գործընթացը;
- Համաֆինանսավորել այն միկրո, մանր և միջին բիզնեսները (MSMEs), որոնք հետաքրքրված են իրենց բիզնեսն ընդլայնել փոքրամասնություններով բնակեցված շրջաններում – նպաստել մատակարարման շղթայի դիվերսիֆիկացմանը, առևտրային ենթակառուցվածքի նորացմանը և նոր աշխատանքային վայրերի ստեղծմանը Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների համար, հատկապես երիտասարդների և կանանց համար:
- Էթնիկ փոքրամասնությունների իրազեկվածության բարձրացում և խորհրդակցություն մանր և միջին բիզնեսներին աջակցող պետական ծրագրերի և սերվիսների («Արտադրիկ Վրաստանում», «Գյուղի զարգացման գործակալություն», «GITA») օգտագործումը բարելավելու մասին:
- Շրջանային ստարտափների աջակցություն – նախաակսելերացիոն և ակսելերացիոն ծրագրեր, բիզնես ինկուբատորներ և այլն:
- Բիզնեսի զարգացման հմտությունների և ֆինանսների հարցերում գրագիտության բարելավման նպաստում տարածաշրջանային ձեռնարկատերերի համար:
- Էթնիկ փոքրամասնություններին տեղեկացնել և նրանց խրախուսել ներգրավել մասնագիտական համակարգում:

- Մասնագիտական կրթության հաստատությունների և աջակցել էթնիկ փոքրամասնություններ կայացնող ուսանողների կարիքներն ավելի լավ բավարարելու համար; Նոր մեխանիզմների մշակում մասնագիտական կրթական համակարգում նրանց ներգրավվածությունը բարելավելու նպատակով:
- Աջակցել փոքրամասնություններով բնակեցված շրջաններում բիզնես միություններ ստեղծելուն, ինչն օգուտ կբերի ինչպես տեղական տնտեսությանը, այնպես էլ փոքրամասնությունների ներկայացուցիչներին:
- Թիրախային շրջաններում միասնական խորհրդատվական հարթակներ ստեղծել մասնագիտական կրթական հաստատությունների և բիզնես միությունների միջև:
- Մասնագիտական ուսումնարաններում տեղական աշխատանքային շուկայի պահանջների համապատասխան կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի իրականացման նպատակով:
- Մեկթորություն և կապերի ընդլայնում - փոքրամասնություններ ներկայացնող ձեռնարկատերերի և այլ շրջանների ձեռնարկատերերի միջև փորձով կիսվելու և նոր տնտեսական և առևտրային կապեր ստեղծելու նպատակով:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ և ԱՅԼ ՄԱՆՐԱՍԱՍՆԵՐ

- Դրամաշնորհային ծրագրի ընդհանուր բյուջեն \$4 000 000 է, իսկ մեկ կազմակերպության/ընկերության համար դրամաշնորհային գումարի վերին սահմանը \$120,000 է: Բացառիկ և լավ փաստարկված դեպքում, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան կարող է բարձրացնել ֆինանսավորման վերին սահմանը:
- Բիզնեսի/ստարտափների ֆինանսավորման գլխավոր պահանջներից մեկն է 50%-անոց համաֆինանսավորում բիզնեսի կողմից, ինչը ներառում է դրամական ներդրումներ, վարկ և համաֆինանսավորում այլ աղբյուրներից (այդ թվում նաև պետական ծրագրերից):
- Համաֆինանսավորում չի համարվի բնեղեն ձևով (in-kind) ներդրումները: Այնուամենայնիվ, էթնիկ և կրոնական փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդի կամ կին ձեռնակատիրոջ հայտի դեպքում, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան իրավունք է վերապահում նվազեցնել համաֆինանսավորման մասը, թույլատրել բնեղեն ձևով համաֆինանսավորումը կամ դիմորդից ընդհանրապես չպահանջել ներդրում:
- Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորված բոլոր նախագծերի իրականացման առավելագույն ժամկետը 18 ամիս է:
- Նախագծերի իրականացման հիմնական տարածաշրջաններն են.

- Զվեմո Զարթի(Նինոծմինդա, Ծալկա, Գարդաբանի, Դմանիսի, Մանուելուլի)
- Սանցիտե-Ջավախեթի (Ախալքալաքի, Ախալցխե, Նինոծմինդա)
- Կախեթի (Ախմետա, Պանկիսի, Սագարեջո, Դվարեյի, Լագոդեխի)
- Լեռնային Աջարիա (Շուևիևի, Զեդա, Խուլո)

- Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ չեն թույլատրվում, սակայն դիմողը կարող է ներկայացնել միասնական դիմում այլ անձի հետ, ով նույնպես պետք է բավարարի առաջատար դիմողի համար սահմանված չափանիշները:
- Առաջատար դիմողը միաժամանակ կարող է միայն մեկ դիմում ներկայացնել: Այս դիմումի քննարկման ընթացքում նա չի կարող լինել այլ նախագծի համահեղինակ:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ

- Միկրո, մանր և միջին ձեռնարկությունները, ստարտափները, սոցիալական ձեռնարկությունները;
- Ֆինանսական հաստատությունները և այլ խոշոր բիզնեսները;
- Բիզնես միությունները;
- Հասարակական կազմակերպությունները:

ԵԹԵ ԴԻՄԵՆՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԴԻՄՈՐԴՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻԷ ՈՒՆԻ

- Պոտենցիալ դիմորդների հնարավորությունները հզորացնելու նպատակով, ՄԱԿ-ի ասոցիացիան ապահովում է դրամաշնորհային նախագծեր գրելու, ֆինանսային մենեջմենտի, ներքին վերահսկողության, մոնիտորինգի և գնահատման սեմինարներ և գործնական հանդիպումներ՝ տարին առնվազն երկու անգամ: Նշված միջոցառման ամսաթվերը և օրակարգը կիրառարակվի Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի վեբ-կայքում (www.una.ge) և հասանելի կլինի բոլոր հետաքրքրված կազմակերպությունների համար:
- Բացի այդ, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան և ծրագրի գործընկերներն ապահովում են ուսուցում (այսպես կոչված «coaching») ընտրված դիմորդների համար, որը հնարավոր է ներառի բիզնես պլան մշակելու, պետական և մասնավոր աղբյուրներից համաֆինանսավորում ստանալու համար հարկավոր օգնություն և ըստ կարիքի՝ այլ խորհրդատվություններ:

ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ.

- ՄԱԿ-ի ասոցիացիան դրամաշնորհներն ընտրող թիմի/հանձնաժողովի հետ սիստեմատիկորեն կքննարկի ներկայացված նախագծային հայտերը:
- Ընտրման ընթացքը կազմված է երկու փուլից:
- Եթե դիմորդը ներկայացնում է բիզնես/ստարտափ, առաջին փուլում նա պետք է ներկայացնի բիզնեսի համար նախատեսված հատուկ հայտ, իսկ երկրորդ փուլում՝ մանրամասն բիզնես պլան:
- Եթե դիմորդը ներկայացնում է հասարակական կազմակերպություն, առաջին փուլում նա պետք է ներկայացնի նախագծի հայեցակարգ (առավելագույնը 5 էջ՝ առանց հավելվածների), իսկ երկրորդ փուլում՝ ամբողջական հայտ (առավելագույնը 15 էջ՝ առանց հավելվածների):
- Լրացնելու հայտերը երկու փուլերի համար կարող եք գտնել Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի վեբ-կայքում. **Տես՝ QR Code**
- Բոլոր դրամաշնորհային հայտերը պետք է ուղարկել Էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ հասցեին. una@una.ge, իսկ subject line-ում պետք է գրել „Georgia Integration Grants Facility“:

